ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի փետրվարի 1—4 օրերին պաշտոնական ացյով Մայր Աթոռում էր գտնվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Էժեն Կարտոն Բլեյկը: Մեծարգո հյուրին ուղեկցում էին ռուս պրավոսլավ եկեղեցու կողմից հոգեշնորհ հայր Կիրիլ վարդապետը և թարգման Սերգեյ Գորդեևը:

Փետրվարի 1-ին, երեքշաբթի օրը, ժամը 17-ին, հարգարժան հյուրերին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու համար Երևանի օդանավակայան էին եկել Մայր Աթոռի ներկայացուցիչներ գերաշնորհ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը և Հակոբ սարկավագ Գյոկչյանը:

Հյուրերին դիմավորելու համար օդանավակայան էր եկել նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Սուրեն Հովհաննիսյանը:

Ժամանումից հետո հյուրերը առաջնորդվեցին Մայր Աթոռ և ընդունվեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Սրբության և դոկտ. Բլեյկի միջև տեղի ունեցավ զրույց՝ էկումենիկ շարժման և հայ եկեղեցուն վերաբերող հարցերի շուրջ:

Երեկոյան, ընթրիքից հետո, հյուրերը մեկնեցին Երևան՝ «Արմենիա» հյուրանոցում իրենց հատկացված հարկաբաժինները:

Փետրվարի 2-ին, չորեքշաբթի օրը, հյուրերը այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան պետական Մատենադարան, Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, Եղեռնի հուշարձան, Էրեբունի թանգարան, այնուհետև եղան Օշականում և իրենց հարգանքը մատուցեցին ս. Մեսրոպի շիրիմին:

Նույն օրը, կեսօրին, Վեհարանում, ի պատիվ մեծարգո հյուրի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը, նախագահի տեղակալ պրն. Սուրեն Հովհաննիսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Մայր Աթոռի միաբանության ու պաշտոնեության ներկայացուցիչները: Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բաժակաճառեր:

Երեկոյան Մայր տաճարում տեղի ունեցավ համատեղ էկումենիկ աղոթք, որից հետո Նորին Սուրբ Օծությունը ջերմ խոսքերով ողջունեց պատվարժան հյուրի ներկայությունը Մայր Աթոռում՝ դրվատելով նրա մատուցած ծառայությունները էկումենիկ շարժման զարգացման և քրիստոնեական եկեղեցիների միության ամրապնդման գործին իբրև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար։

Վերջում, ի պատիվ հարգելի հյուրի, Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր համերգ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ ղեկավարությամբ խմբավար պրն. Խորեն Մեյխանեջյանի։ Կատարվեցին հայկական, ռուսական և արևմտաեվրոպական եկեղեցական երգեր։

Փետրվարի 3-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, դոկտ. Բլեյկը իր ուղեկիցներով մեկնեց ս. Գեղարդի վանք, որտեղ արժանացավ ջերմ ընդունելության։ Վերադարձին հյուրերը դիտեցին նաև Գառնիի վերակառուցվող հեթանոսական տաճարը։

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, դոկտ. Բլեյկը ներկա եղավ հոգևոր ճեմարանում իր պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին։

Փետրվարի 4-ին, ուրբաթ օրը, բարձրաստիճան հյուրը և նրան ուղեկցող անձինք այցելեցին ս. Հռիփսիմեի տաճար, ապա դիտեցին Հին Վեհարանի թանգարանը և Մայր Աթոռի տպարանը։

Ժամը 3-ին Վեհարանում տրվեց ողջերթի ճաշկերույթ, որից հետո Վեհափառ Հայրապետի և դոկտ. Բլեյկի միջև տեղի ունեցավ զրույց սրտագին և ջերմ մթնոլորտում։

Ժամը 17-ին հյուրերը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, ուղևորվեցին օդանավակայան՝ մեկնելու Մոսկվա։

Բարձրաստիճան հյուրերին օդանավակայանում ողջերթ մաղթեցին Մայր Աթոռի ներկայացուցիչները և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալը։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

5-ը փետրվարի 1972 թ.,
Ս. Էջմիածին